

ՍՍՀՄ ԺՈՂՈՎՈՒՐԳՆԵՐԻ ՀՈԳԵՎՈՐ ՄԻԱՄՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԳՈՐԻԳԵՆ ԽԱԶԱՏՅԱՆ

ՍՍՀՄ կազմավորումը, մեր երկրի բոլոր ազգերի ու ազգությունների միջև բարեկամության, վստահության և եղբայրական համագործակցության հարաբերությունների հաստատումը վիթխարի մասշտաբներով արագացրեց Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության ծնունդ հանդիսացող սովետական հասարակության հոգևոր կուլտուրայի զարգացումը։ Սոցիալիզմը լուծեց հիրավի պատմական նշանակություն ունեցող խնդիր՝ կուլտուրայի բոլոր զանգեքը դարձրեց բազմամիլիոն աշխատավոր մասսաների սեփականությունը, յուրաքանչյուր մարդու համար, անկախ նրա սոցիալական դրությունից և ազգությունից, բացեց գիտելիքների բոլոր աղբյուրները։ Անսպառ հնարավորություններ ստեղծվեցին տաղանդների և ձիրքերի դրսևորման, ՍՍՀՄ բոլոր ժողովուրդների կուլտուրաների ծաղկման, գիտության և արվեստի բուռն զարգացման համար։

Կոմունիստական շինարարության ծավալմանը զուգընթաց, հատկապես զարգացած սոցիալիզմի պայմաններում, ՍՍՀՄ ազգերի ու ազգությունների էկոնոմիկայի և կուլտուրայի բազմակողմանի ծաղկման, մարդկանց պատմական նոր հանրության՝ սովետական ժողովրդի, կազմավորման հիման վրա տեղի է ունենում սոցիալական ու ինտեռնացիոնալ նոր ընդհանրության՝ միասնական սովետական ժողովրդի կուլտուրայի ձևավորումը։ ՍՍՀՄ բոլոր ժողովուրդների համատեղ այդ հոգևոր համագործակցությունն է առաջ մղում Սովետական Միության բազմազգ կուլտուրան, արվեստն ու գրականությունը։ Բայց առ բայց դնում կոմունիստական հասարակության կուլտուրայի հիմքերը։ «ՍՍՀՄ կազմավորման 60-րդ տարեդարձի մասին» ՍՄԿԿ կենտկոմի որոշման մեջ ասված է. «Հասուն սոցիալիզմի բարերար հողի վրա աճում և ամրապնդվում է սովետական ժողովրդի միասնական ինտերնացիոնալ կուլտուրան, որը ծառայում է բոլոր աշխատավորներին, արտահայտում նրանց ընդհանուր իդեալները։ Այն ներառում է ազգային կուլտուրաների նվաճումների և խնրանքների պալանդուլթյունների մեջ եղած ամբողջ համանշանակալիքն։ Բովանդակությամբ սոցիալիստական, իր ազգային ձևերով բազմազան, իր ոգով ու բնույթով ինտերնացիոնալիստական սովետական կուլտուրան դարձել է Սովետական Միության ազգերի և ազգությունների գաղափարաբարոյական համախմբման մեծ ուժ»¹։

Ազգային կուլտուրաների բուռն զարգացման ու արդյունավետ համագործակցության, Սովետական Միության մասշտաբով հոգևոր կյանքի ինտերնացիոնալացման պրոցեսը խորհրդանշող գործոն է ՍՍՀՄ բոլոր ազգերի ու ազգությունների համար ընդհանուր կրթության ու աճող սերնդի դաստիարակության, միջնակարգ մասնագիտական և բարձրագույն կրթությամբ որակյալ կադրերի պատրաստման միասնական համակարգը։ Պատմության մեջ առաջին անգամ ձևավորվել է ժողովրդական կրթության սկզբունքորեն նոր, կատարյալ սխառն, որը չի սահմանափակվում այս կամ այն հանրապետության շրջանակներով, այլ կրում է միասնական համասովետական բնույթ

և ամբողջովին համապատասխանում է երկրի բոլոր ազգերի աշխատավորների կենսական շահերին, կոմունիստական շինարարության պահանջներին: ՍՍՀՄ սահմանադրությունը, միութենական հանրապետությունների օրենսդրությունները միահամուռ երաշխավորում են երկրի բոլոր քաղաքացիների ձրի կրթության հավասար իրավունք՝ անկախ նրանց առաջապական և ազգային պատկանելությունից, սեռից, դավանանքից, ունեցվածքային և սոցիալական դրությունից:

Ժողովրդական կրթության սովետական սիստեմը զարգացած սոցիալիստական հասարակությունում հանդես է գալիս որպես մեր երկրի դասակարգային և սոցիալական խմբերի, ազգերի և ազգությունների մերձեցման, ՍՍՀՄ-ում սոցիալական միատարրության հաստատման կարևորագույն գործոն: ՍՄԿԿ-ն և սովետական պետությունը խստորեն հետևում են Վ. Ի. Լենինի այն ցուցումին, որ ապետք է ձգտել հասնելու դպրոցական գործում ազգերի միավորմանը, որպեսզի դպրոցում նախապատրաստվի այն, ինչ իրագործվում է կյանքում²: Սովետական դպրոցի անցած փառապանծ ուղին վկայում է, որ այն իր նպատակներով, աշխարհայեցողությամբ, մարդասիրական վեհ իդեալներով ամենաժողովրդական, իսկական դեմոկրատական և առաջադիմական դպրոց է: Այն հավասարապես բավարարում է սովետական հասարակության բոլոր խավերի, ՍՍՀՄ բոլոր ժողովուրդների հոգևոր պահանջմունքները, ապահովում յուրաքանչյուր անհատի ներդաշնակ, համակողմանի զարգացումը: Ժողովրդական կրթության՝ որպես միասնական ամբողջական սիստեմի, զարգացման ճանապարհին կարևորագույն քայլ հանդիսացավ ՍՍՀՄ Գերագույն սովետի կողմից (1973 թ. մայիսին) ՍՍՀ Միության և միութենական հանրապետությունների ժողովրդական կրթության օրենսդրության հիմունքների հաստատումը: Պատմական այդ փաստաթղթում օրենսդրական կարգով ամրագրված են ժողովրդական կրթության վերաբերյալ մեր նվաճումները: Իր մասշտաբներով և սոցիալական հետևանքներով ժողովրդական կրթության զարգացման որակապես նոր փուլ հանդիսացավ ընդհանուր պարտադիր միջնակարգ կրթությանն անցնելու խնդրի ավարտումը: Միջնակարգ կրթություն ստանալու անհրաժեշտությունը դարձել է սոցիալիստական ապրելակերպի նորմա, երիտասարդ քաղաքացիների՝ սահմանադրությամբ հաստատված իրավունք և պարտականություն: Ուսուցման տարբեր ձևերում ներկայումս ընդգրկված է ավելի քան 100 միլիոն մարդ. նրանցից 44,3 միլիոնը սովորում է հանրակրթական դպրոցներում, 4,6 միլիոնը՝ միջնակարգ մասնագիտական, 5,3 միլիոնը բարձրագույն ուսումնական հաստատություններում³: Կուսակցության XXV և XXVI համագումարների ամբիոնից որպես համազգային հպարտության հիմն հնչեց հանրագումարային այն նվաճումը, որ ՍՍՀՄ-ն աշխարհում առաջին տեղն է գրավում երիտասարդ սերնդի կրթության մակարդակով: «Ամենախիստ ուսուցիչը՝ պատմությունը, մեր երկրին՝ «ժողովրդական կրթություն» առարկայից նշանակել է բարձրագույն բալը»⁴ — ասել է Լ. Ի. Բրեժնևը:

Ժողովրդական կրթության բուռն զարգացում է տեղի ունեցել հավասարապես բոլոր միութենական և ինքնավար հանրապետություններում, որը Լենինյան ազգային քաղաքականության կենսագործման վառ դրսևորում է: Պերճախոս է Սովետական Հայաստանի օրինակը: Եթե սովետական կարգերի հաստատումից առաջ Հայաստանի դպրոցներում սովորում էր ընդամենը 18 հազար երեխա, ապա այսօր մեր հանրապետության ուսուցման բոլոր օղակներում ընդգրկված է ավելի քան 1.203 հազար մարդ, այդ թվում 594,3 հազարը՝ հանրակրթական դպրոցներում, 49,2 հազարը՝ միջնակարգ մասնա-

² Վ. Ի. Լենին, ԵԺԺ, հ. 24, էջ 217:

³ «Правда», 24. VII. 1982.

⁴ Լ. Ի. Բրեժնև, Լենինյան կուրսով, հ. 2, Երևան, 1970, էջ 300:

դիտական և 58,6 հազարը՝ բարձրագույն ուսումնական հաստատություններում⁵։ Սովետական Միությունում այլևս հետամնաց ազգային ժայռամասեր չկան։ Այսպես, օրինակ, եթե ժողովրդական տնտեսության մեջ զբաղված 1000 մարդուց ՍՄՀՄ-ում ամբողջությամբ վերցրած 805-ը ունի բարձրագույն և միջնակարգ կրթություն, ապա ՌՍՖՍՀ-ում՝ 803, Ուկրաինայում՝ 813, Ուզբեկստանում՝ 848, Վրաստանում՝ 856, Հայաստանում՝ 868, Թաթարական ԻՍՍՀ-ում՝ 815, Զովաշական ԻՍՍՀ-ում՝ 814, Կոմի ԻՍՍՀ-ում՝ 845, Յակուտական ԻՍՍՀ-ում՝ 848 մարդ⁶։ ՍՍՀՄ-ն աշխարհում առաջին տեղն է գրավում միջնակարգ մասնագիտական և բարձրագույն կրթությամբ մասնագետների պատրաստման մակարդակով։ Բավական է ասել, որ միայն 10-րդ հնգամյակի տարիներին երկրում պատրաստվել է 10 միլիոն մասնագետ⁷։ Հատկանշական է, որ Սովետական Հայաստանի բարձրագույն և միջնակարգ մասնագիտական հաստատությունները 1929—1979 թթ. պատրաստել են 419,6 հազար մասնագետ, այդ թվում 179,7 հազարը՝ բարձրագույն կրթությամբ⁸։ Ազգային և համազգային հպարտություն է այն փաստը, որ Միջին Ասիայի, Անդերկովկասի, Մերձբալթիկայի հանրապետությունները, Ղազախստանը, Մոլդավիան և Բելուռուսիան 10 հազար բնակչին ընկնող ուսանողների թվով 1,5—2 անգամ գերազանցում են այնպիսի՝ զարգացած կապիտալիստական երկրների, ինչպիսիք են Անգլիան, Ֆրանսիան, ԳՖՀ-ն, Ժապոնիան, Իտալիան և այլն⁹։

ՍՍՀՄ հոգևոր պոտենցիալի աննախընթաց աճը զարգացած սոցիալիզմի բնորոշ գիծն է։ ՍՄԿԿ XXVI համագումարը փաստերի ու թվերի խոստովանելով ցույց տվեց, որ Սովետական Միությունում կատարված կուլտուրական հեղափոխության արդյունքները գտել են համընդհանուր ճանաչում։ ՍՍՀՄ-ն իրավամբ այսօր կոչում են հոգևոր տեսակետից ամենահարուստ, ամենակարգացող, ընթերցասեր երկիրն աշխարհում։ Հողագնդի վրա ոչ մի պետությունում այնքան գիրք, թերթ ու ամսագիր չի հրատարակվում, որքան մեր երկրում։ Հրատարակվող գրքերի տարեկան տպաքանակը կազմում է 1,9 միլիարդ օրինակ։ Իսկ «ժողովրդի կուլտուրայի բարձրությունը ստույգ չափվում է երկրում հրատարակվող գրքերի և թերթերի քանակով»¹⁰,— ասել է Մ. Գորեկին։ Մեր երկրում մեկ ընտանիքին միջին հաշվով ընկնում է մոտ հինգ պարբերական։ ՍՍՀՄ-ում գրադարանների ծառայությունից օգտվում է 220 միլիոն մարդ, որոնց տարեկան տրվում է ավելի քան հինգ միլիարդ գիրք և բրոշյուր¹¹։ Սովետական Միությունն աշխարհի ցանկացած երկրին գերազանցում է մշակույթի պալատների ու ակումբների, կինոթատրոնների, դրամատիկական ու երաժշտական թատրոնների ընդարձակ ցանցով։ Երկրում գործում են հազարավոր ու տասնյակ հազարավոր ինքնագործ դրամատիկական կոլեկտիվներ, երգի ու պարի անսամբլներ, ժողովրդական թատրոններ։ Ներկայումս գեղարվեստական ինքնագործունեությանը երկրի մասշտաբով մասնակցում է շուրջ 26 միլիոն մարդ։ Բավական է ասել, որ միայն խոսվական ՍՍՀՄ-ում գործում են մոտ 28 հազար գեղարվեստական ինքնագործունեության կոլեկտիվներ, որոնք միավորում են ավելի քան 426 հազար բանվորների, կոլտնտեսականների ու մտավորականների։ Յուրաքանչյուր հինգ տարին մեկ անցկացվում է երգի ու պարի հանրապետական տոն, որը ժողովրդական տաղանդների ու պրոֆեսիոնալ արվեստի մեծ ստուգատես է,

⁵ «Սովետական Հայաստան», 31. VII. 1982.

⁶ «Население СССР. По данным Всесоюзной переписи населения 1979 г.», М., 1980, с. 21—22.

⁷ «ՍՄԿԿ XXVI համագումարի նյութերը», Երևան, 1981, էջ 217։

⁸ «Народное хозяйство Арм. ССР за 60 лет», Ереван, 1980, с. 180, 280.

⁹ «Вопросы истории КПСС», 1982, № 5, с. 29.

¹⁰ М. Горький, Избранные сочинения, т. 25, с. 387.

¹¹ «Правда», 29.V. 1982.

եղբայր ժողովուրդների լենինյան բարեկամության վառ դրսևորում¹²։ Սովետական հասարակության հոգևոր կյանքը, նրա ապրելակերպը հատկանշող այս ցուցանիշները խոսում են կուսակցության ու պետության ակնառու նվաճումների մասին։

ՍՍՀՄ հասարակական կյանքի ինտերնացիոնալացման, այդ թվում հոգևոր կուլտուրայի միասնության գոյացման գործում կարևոր դեր է խաղում գիտությունը։ Ենորհիվ կոմունիստական կուսակցության ու սովետական պետության մշտական ու անդուլ հոգատարության, ՍՍՀՄ-ում ստեղծվել է գիտական հզոր պոտենցիալ։ Մեր երկրում արդյունավետ կերպով աշխատում են ավելի քան 1,4 միլիոն գիտնական, որը կազմում է աշխարհի գիտական աշխատողների մեկ քառորդից ավելին¹³։ Գիտական հետազոտությունների մի շարք կարևոր ուղղություններով սովետական գիտությունն ընթանում է համաշխարհային գիտության ավանդարտում։ Սովետական գիտական մտքի հետ են կապված մարդու կողմից տիեզերքի նվաճման արշավույսը, խաղաղ նպատակներով ատոմային էներգիայի օգտագործումը, ջերմամիջուկային սինթեզի, լազերային տեխնիկայի, ծագումնաբանության պրոբլեմների հետազոտման նվաճումները, հողագործության արդյունավետության և անասնապահության արտադրողականության բարձրացման նոր ուղիների հայտնադրումը և կիրառումը։

Սովետական գիտության զարգացման գործում առաջատար դերը պատկանում է ՍՍՀՄ գիտությունների ակադեմիային։ ՍՍՀՄ ԳԱ-ն, ասված է նրա 250-ամյա հոբելյանի առթիվ ՍՄԿԿ Կենտկոմի որոշման մեջ, դարձել է ֆունդամենտալ հետազոտությունների ծավալման խոշոր կենտրոն, սովետական գիտության զրոշակակիրը, որը սահմանում է գիտական ստրատեգիան և իրականացնում ՍՍՀՄ գիտնականների բազմազգ բանակի գործունեության կոորդինացումը¹⁴։ Հայրենական և համաշխարհային գիտության ընդհանուր գանձարանն արժանի ավանդ են ներմուծում նաև Հայաստանի գիտնականները։ Ակադեմիական և ճյուղային ինստիտուտներում, լաբորատորիաներում, նախագծային-կոնստրուկտորական բյուրոներում, բուհական ամբիոններում ֆունդամենտալ և կիրառական գիտությունների կարևորագույն պրոբլեմների ուղղությամբ կատարվող հետազոտությունների ծավալումը, դրանց մշակումների արդյունավետության բարձրացումը, ժողովրդական տնտեսության մեջ գիտության ու տեխնիկայի նվաճումների ներդրման արագացումը սովետահայ գիտության դեմքը բնութագրող գծերն են։

Զարգացած սոցիալիզմի փուլում միութենական հանրապետությունների գիտնականների համագործակցությունը թևակոխել է որակապես նոր փուլ, որը բնութագրվում է որպես փոխօգնության և փոխհարստացման պրոցես։ Դրա հետևանքով սովետական հանրապետությունները, ՍՍՀՄ բոլոր ժողովուրդները ձեռք են բերել գիտատեխնիկական մեծ պոտենցիալ։ ՍՍՀՄ-ում գիտության ինտերնացիոնալ միասնության ամրապնդման հիմքը գիտահետազոտական միջհանրապետական մասնագիտացումն է, հանրապետությունների գիտնականների համագործակցությունն ու բազմակողմանի փոխօգնությունը, ֆունդամենտալ հետազոտությունների ծավալման ու արտադրության մեջ գիտության նվաճումների ներդրման արագացումը, ինչպես նաև գիտական կադրերի պատրաստումը։

Սովետական ժողովուրդների հոգևոր միասնության ցայտուն օրինակ է մեր երկրի բազմազգ գրականությունը և արվեստը։ Գեղարվեստական կուլտուրայի բնագավառում տեղի ունեցող բազմակերպ երևույթների՝ ազգային

¹² «Вопросы истории КПСС», 1982, № 2, с. 33.

¹³ «Правда», 24. I. 1982.

¹⁴ «ՍՄԿԿ գաղափարական աշխատանի մասին» (փաստաթղթերի ժողովածու), Երևան, 1980, էջ 757.

գրականությունների ու արվեստների սերտ շփման ու համագործակցության շնորհիվ կազմավորվում է ՄՍՀՄ միասնական արվեստն ու գրականությունը: Յուրաքանչյուր ազգային կուլտուրա, փոխգործողության մեջ մտնելով ազգային մյուս կուլտուրաների հետ, ընկալելով ու փոխակերպելով մյուսի փորձը, համադրելով այն սեփական ազգային ավանդույթների հետ, դառնում է ավելի հարուստ, համանշանակալի: Սովետական գեղարվեստական կուլտուրայի ստեղծագործական միասնությունը ցմանն ստեղծում է սոցիալիստական ռեալիզմի մեթոդն է: Վերջինս գրողից, արվեստագետից պահանջում է հետևել կյանքի ճշմարտությանը, հավատարմորեն ծառայել ժողովրդին, կոմունիզմի իդեալներին: Ռուս գրականության և արվեստի ամենամեծ նշանակալի ազդեցությամբ, անցյալի գեղարվեստական ժառանգության օգտագործմամբ մեր երկրի ժողովուրդները ստեղծել են իրենց ինքնատիպ, ազգային արվեստն ու գրականությունը: Սովետական գրողների երկերը այսօր հրապարակվում են ՄՍՀՄ 76 ժողովուրդների լեզվով: Ազգային գրողներից յուրաքանչյուրը, ասել է Մ. Գորկին, «Աշխատում է ոչ միայն իր ժողովրդի, այլև առհասարակ Սոցիալիստական Հանրապետությունների Միության և ավտոնոմ մարզերի բոլոր ժողովուրդների համար»¹⁵:

Գրականության և արվեստի ստեղծագործությունները, որոնք սովետական հասարակության ընդերքում տեղի ունեցող սոցիալ-տնտեսական և գաղափարական խոր պրոցեսների արտացոլումն են, նպաստում են հասարակության և մարդու մարտական ու աշխատանքային սխրանքների, կոմունիստական բարոյականության նորմերի, գեղեցկության մասին նոր պատկերացումների ձևավորմանն ու հաստատմանը: Գրողների, արվեստագետների, դրամատուրգների, կինոռեժիսորների ստեղծած հերոսների կերպարները, նրանց առաջադրած հումանիստական մտքերը դառնում են միլիոնավոր աշխատավորների հոգևոր սեփականությունը, նրանց եղբայրությունն ամրապնդող հզոր ուժ:

Ազգային կուլտուրաների համագործակցության ու փոխհարստացման, սովետական հասարակության հոգևոր միասնության ապահովման գործում մեծ է ազգային թատրոնների նշանակությունը: Նրանցից յուրաքանչյուրն ազգային կյանքից վերցրած պիեսների հետ բեմադրում է նաև 'եղբայր ժողովուրդների դրամատուրգների գործեր, որոնք օգնում են տվյալ հանրապետության բնակչությանը՝ մոտիկից հաղորդակցվելու մյուս ժողովուրդների արվեստի նվաճումներին, փոխհարստացնում ազգային կուլտուրաները: Այսպես, օրինակ, Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի, Սունդուկյանի անվան, լենինականի Մուսվաթի անվան, Կիրովականի Աբելյանի անվան, պատանի հանդիսատեսի, երաժշտական կոմեդիայի, շրջանային ու ժողովրդական թատրոնները հայ դասական ու ժամանակակից հեղինակների գործերի հետ միասին մեծ հաջողությամբ բեմադրում են ռուս, վրաց, ուկրաինական, ադրբեջանական և սովետական մյուս ժողովուրդների դրամատուրգների պիեսներ: Այդ նույն ժամանակ Մոսկվայի, լենինգրադի, Քրեմլիսիի, Բաքվի, Կիևի, Ռիգայի, ինչպես և միության այլ քաղաքների թատերական բեմերում ու համերգասրահներում պատվավոր տեղ են գրավում հայ դասական և սովետական դրամատուրգների ու կոմպոզիտորների ստեղծագործությունները:

Սովետական հասարակության հոգևոր միասնությունը սերտորեն կապված է սովետական ժողովրդի կազմավորման հետ: Այդ հանրությունը խարսխվում է ՄՍՀՄ բոլոր ազգերի ու ազգությունների պատմական բախտի անբաժանելիության վրա, ինչպես տնտեսական, այնպես էլ հոգևոր բնույթի օբյեկտիվ խոր փոփոխությունների, բանվոր դասակարգի, կոլտնտեսային գյուղացիության և մտավորականության անխախտ դաշինքի վրա: Սովետական ժողովուրդների ինտեգրացիոնալ ընդհանրության դեմքն ու էությունը հատկանշող գիծը նրա կուռ միասնությունն է, որի երաշխիքը երկրի մասշտաբով

¹⁵ Մ. Գորկի, Գրական հրապարակախոսական հոդվածներ, Երևան, 1949, էջ 333—334:

առկա սոցիալ-տնտեսական և քաղաքական ու գաղափարական ընդհանուր հիմքն է: Աճել է նոր մարդը, որն իր ազգային առանձնահատկությունները պահպանելով հանդերձ, անսահմանորեն նվիրված հայրենասեր և համոզված ինտերնացիոնալիստ է: Դեռ ավելին. նրա հայրենասիրությունն ու ինտերնացիոնալիզմն օրգանապես միաձուլվում են սովետական մարդու համազգային հպարտության զգացմունքի հետ: Միաժամանակ պետք է նկատի ունենալ և այն փաստը, որ սովետական ժողովուրդը բավազգ է, նա միավորում է երկրի 100-ից ավելի ազգերի ու ազգությունների: Այդուհանդերձ, ՍՍՀՄ աշխատավորները կազմում են բազմազգ մի ընտանիք, որտեղ ազգային առանձնահատկությունները սերտորեն զուգորդվում են համասովետական հատկանիշների և ավանդույթների հետ: Ահա թե ինչու, պատմական այդ նոր հանրության առկայությունը մեծապես օգնում է ՍՍՀՄ ազգերի զարգացմանը, ժողովուրդների միջև տեղի ունեցող համագործակցության ու փոխհարստացման ճանապարհով երկրի ամբողջ կացութաձևի ինտերնացիոնալացմանը, այդ թվում հոգևոր կյանքի միասնականացմանը:

Սովետական բազմազգ կուլտուրայի դարգացման գործում կարևոր դեր են խաղում ազգային լեզուները: Վ. Ի. Լենինը նշել է, որ կոմունիստական հասարակարգի միասնական կուլտուրայի ստեղծման ճանապարհը կապիտալիզմի լուծը թոթափած յուրաքանչյուր ժողովրդի հոգևոր կուլտուրայի զարգացումն ու մերձեցումն է: Իսկ դա հնարավոր է լեզվական բազայի վրա: Լեզուն կուլտուրայի բոլոր նվաճումների արտահայտման գլխավոր միջոցն է: Սոցիալիզմը ապահովել է ազգային լեզուների ազատ զարգացումը: Բոլոր լեզուների հավասարությունը, արտոնությունների բացակայությունը, ցանկացած լեզվով խոսելու և սովորելու յուրաքանչյուրի լիակատար իրավունքն օրենսդրականորեն ամրագրված են ՍՍՀՄ և միութենական հանրապետությունների սահմանադրություններում: Այսպես, օրինակ, Հայկական ՍՍՀ սահմանադրության 72-րդ հոդվածի համաձայն հայոց լեզուն համարվում է հանրապետության պետական լեզու: Դրա հետ միասին ապահովվում է ռուսերեն, քրդերեն, ադրբեջաներեն և այլ լեզուների ազատ օգտագործումը: Հիշարժան է այն փաստը, որ 40-ից ավելի ժողովուրդներ սովետական իշխանության տարիներին ստեղծեցին գիտականորեն մշակված գիր և այժմ ունեն զարգացած գրական լեզու: Մայրենի լեզվի հետ մեկտեղ մեր երկրի բոլոր ժողովուրդները ուսուց լեզուն կամովին ընտրել են որպես ազգամիջյան հաղորդակցության և համագործակցության լեզու: Ինչպես մատնանշված է «ՍՍՀՄ կազմավորման 60-րդ տարեդարձի մասին» ՄՄԿԿ Կենտկոմի որոշման մեջ, ուսուց լեզուն «դարձել է սովետական ժողովրդի սոցիալ-քաղաքական և գաղափարական միասնության ամրապնդման, ազգային կուլտուրաների զարգացման ու փոխհարստացման կարևոր գործոն: Այն մեր բոլոր ժողովուրդների համար լայն ճանապարհ է բացել դեպի համաշխարհային քաղաքակրթության հոգևոր հարստությունները: Ամեն մի սովետական քաղաքացի, լենինյան խոսքերով ասած, հնարավորություն ունի սովորելու ուսուց մեծ լեզուն»¹⁶, ներկայումս երկրի բնակչության 82%-ը ազատորեն տիրապետում է այդ լեզվին:

Բուրժուական գաղափարախոսները, տարբեր գույնի կեղծարարները, այդ թվում իմպերիալիզմի մարտակառքին լծված դաշնակցական գրչակները տագնապի փող են հնչեցնում այն մասին, որ իբր թե կոմունիստական կուսակցությունն իրագործում է ուսուց լեզվի և կուլտուրայի բռնի պատվաստում, կրթության ուսուսականացում, որպեսզի ամեն գնով ՍՍՀՄ բոլոր ազգերին ու ազգություններին միավորի «սովետա-ուսական տիպի միասնական ազգի մեջ», այսինքն ոչ ուս ժողովուրդներին ձուլի ուս ազգի մեջ: Այսպես, Թեհ-րանում լույս տեսնող դաշնակցական «Ալիք» թերթը գրել է, որ իբր կոմունիստական կուսակցության նպատակն է «ի մի ձուլել ոչ ուս ժողովուրդների

աղգային լեզուները և ազգային մշակույթները»¹⁷, «Ալիքին» և բուրժուական մամուլի մյուս օրգաններին հատուկ նման հայտարարությունները հօգս են ցնդում՝ բախվելով իրերի իսկական վիճակի հետ: Այն փաստը, որ մեր օրերում ուսերեն ազատ խոսող այլազգի մարդկանց թիվը գնալով ավելանում է, ուսաց լեզվի «բռնատիրություն», ուսիֆիկացում չի նշանակում: Նա չի տանում դեպի այս կամ այն լեզվի սահմանափակում, ազգային մշակույթի «աղ-րատացում»: Ընդհակառակը, մայրենի լեզվի հետ մեկտեղ ուսերենի կամավոր ուսումնասիրությունը միանգամայն անհրաժեշտ է, քանի որ այն նպաստում է փորձի փոխադարձ փոխանակությանը և երկրի բոլոր ազգերին ու ազգություններին հաղորդակից դարձնում համասովետական ու համաշխարհային մշակույթի նվաճումներին: ՍՍՀՄ-ում կատարված մարդահամարի վիճակագրական տվյալները վկայում են, որ միութենական և ինքնավար հանրապետությունների բնիկ ազգությունը պատկանող բնակչության 90—99%-ը տվյալ ազգության լեզուն համարում է մայրենի և լայնորեն օգտվում է նրանից: Այսպես, օրինակ, եթե 1959 թ. ՍՍՀՄ-ում ապրող հայության 89,9%-ն էր հայերենը համարել իր մայրենի լեզուն, ապա 1979 թ. մարդահամարի տվյալներով՝ 90,7%-ը¹⁸: Հանրահայտ է նաև այն, որ բոլոր ազգային հանրապետություններն ունեն մայրենի լեզվով հրատարակվող հարուստ գրականություն, վիթխարի տպագրանակով լույս տեսնող թերթեր, հանդեսներ, գրքեր, գործող թատրոններ, կուլտուր-լուսավորական օջախներ, դպրոցներում, միջնակարգ մասնագիտական և բարձրագույն ուսումնական հաստատություններում դասավանդումը կատարվում է մայրենի լեզվով:

ՍՍՀՄ ժողովուրդների ինտերնացիոնալ, միասնական կուլտուրայի ստեղծման ճանապարհին կարևոր ուղենիշներ են ստեղծագործական կոլեկտիվների, գեղարվեստական ցուցահանդեսների մշտական փոխանակումը, ազգային կուլտուրաների տասնօրյակների և փառատոնների անցկացումը, համամիութենական մասշտաբով գրականության և արվեստի գործիչների հոբելյանների, տարելիցների նշումը, կինոփառատոնների, միութենական հանրապետություններին նվիրված ռադիո և հեռուստատեսային հաղորդումների կազմակերպումը: ՍՍՀՄ ժողովուրդները հայ ժողովրդի հետ միասին, որպես մշակույթի մեծ փառատոն, նշեցին հայ գրերի ստեղծող Մեսրոպ Մաշտոցի ծննդյան 1600-ամյակը, Ռուսաստանի հետ Արևելյան Հայաստանի միացման 150-ամյակը, Հայաստանում սովետական կարգերի հաստատման և Հայաստանի կոմկուսի հիմնադրման 60-ամյակը, հայ մշակույթի մեծ երախտավորների Դավիթ Անհաղթի, Սայաթ-Նովայի, Հովհաննես Թումանյանի, Միքայել Նալբանդյանի, Կոմիտասի, Գաբրիել Սունդուկյանի, Ավետիք Իսահակյանի, Եղիշ Զարենցի, Մարտիրոս Սարյանի, Ալեքսանդր Թամանյանի և ուրիշների հոբելյանները: Մեծ տպագրանակներով թարգմանաբար հայերեն հրատարակվում են ուս, ուկրաինական, վրաց, բելոռուսական, ուզբեկական, ղաղախական և եղբայրական մյուս ժողովուրդների գրականության ու արվեստի լավագույն ստեղծագործությունները: Հանրապետության բուհերի, ստեղծագործական միությունների ու գիտական հիմնարկների ջանքերով պարբերաբար կադմակերպվում են համատեղ գիտական սեսիաներ ու գիտաժողովներ, կերպարվեստի ցուցահանդեսներ և այլն: Միջհանրապետական կուլտուրական, գրական-գեղարվեստական ու գիտական կապերի համակողմանի ուժեղացման ուղղությամբ Հայաստանի կոմկուսի կողմից իրականացվող այս և այլ կարգի միջոցառումները ոչ միայն նպաստում են սովետահայ մշակույթի, արվեստի ու գրականության արժույթների պրոպագանդանը հանրապետության սահմաններից դուրս, այլև օգնում են ՍՍՀՄ ժողովուրդների կուլտուրաների համագործակցությանն ու փոխադարձ հարստացմանը, նրանց ինտերնացիոնալ հիմքերի ամրապնդմանը:

¹⁷ «Ալիք», 20. II. 1966:

¹⁸ «Население СССР. По данным Всесоюзной переписи населения 1979 г.», с. 23.

ՍՍՀՄ եղբայրական ժողովուրդների կուլտուրայի հետ հայ ժողովրդի մշակութային կապերի խորացումը տեղի է ունենում ինչպես ինտերնացիոնալիստականի, այնպես էլ ազգայինի զարգացման միջոցով: Ընդ որում, ազգայինն ավելի սերտորեն ու արտահայտիչ է հանդես գալիս ինտերնացիոնալիստականի հետ անխզելի միասնության մեջ, ինտերնացիոնալիստական կուլտուրան ապագային չէ՝ այն չի բացառում ազգայինը, ինչպես ազգայինը չի բացառում ինտերնացիոնալիստականը: Սովետական կուլտուրան սոցիալիստական է բովանդակությամբ, իր զարգացման գլխավոր ուղղությամբ, բազմազան է իր ազգային ձևերով, ոճով, արտահայտման եղանակներով: Այնպես, ինչպես հսկա ծովը գոյանում է բաղում գետերից, ճիշտ այդպես էլ սովետական միասնական կուլտուրայի հոյակապ ծովը գոյանում է ՍՍՀՄ ազգային կուլտուրաների գետակների համաձուլումից: Դառնալով մեր երկրի ժողովուրդների մշակույթի անբաժան մասը, ընդունելով համասովետական բնույթ, այս կամ այն հոգևոր արժեքը, սակայն, չի կորցնում իր արմատները, ազգային ինքնատիպ գծերը: Ազգերի մերձեցումը թե՛ տնտեսության և թե՛ մշակույթի ոլորտներում ամենեւին էլ չի նշանակում նրանց ձուլում: Գեղարվեստական ստեղծագործության մեծությունը, նրա հանճարեղությունը ազգային որոշակիության մեջ է: Դեպի համամարդկային կուլտուրայի բարձունքները իսկական նորարար արվեստագետ-ստեղծագործողը գնում է իր ազգային կուլտուրայի միջով, որովհետև նա խորապես ապրում է իր ժողովրդի հոգսերով և զինվելով նախորդ հարյուրամյակների կենսափոխափայլությամբ՝ դառնում իր դարաշրջանի ձայնը, գեղարվեստորեն վերախմաստավորում հարազատ ժողովրդի բազմահարուստ կյանքը, հասարակության կողմից առաջադրվող հրատապ խնդիրները: Ազգային որոշակիությունը, նրա ինքնատիպությունը դեպի համամարդկայինը տանող մայրուղին է: Զարգացման այդ օրինաչափությունը վերաբերում է թե՛ մեծ և թե՛ փոքր ազգերի մշակույթի գործիչներին: Սովետական յուրաքանչյուր ժողովուրդ իր «ազգային անհատականության» ընկալումով է մասնակցում կոմունիզմի համամարդկային կուլտուրայի ստեղծմանը: Մեր դարի մեծ նկարիչ Մ. Սարյանը համաշխարհային հռչակ է վայելում: Նրան գիտեն և բարձր են գնահատում աշխարհի ժողովուրդները: Եվ դա այն պատճառով, որ նա հայրենի երկրի՝ Սովետական Հայաստանի, երգին է՝ Կերպարվեստի որ բնագավառն էլ վերցնենք, սովետահայ արվեստի նահապետը միշտ մնում է հայրենի բնության և մարդկանց հետ: Ահա թե ինչու օտարները Հայաստանը ճանաչում են նաև Մ. Սարյանի կտավներով և նրա մեծատաղանդ արվեստի մեջ տեսնում մի ամբողջ երկրի հարազատ ու ամբողջական նկարագիրը: Աշխարհահռչակ քանդակագործ Ս. Կոնյոնկովն ասել է, որ Մ. Սարյանը կտավների վրա այնպես է պատկերել ու «բացատրել» իր սքանչելի երկիրը, որ հեռվից հեռու էլ զգում ես հայոց հողի ու ջրի շունչը, հարազատ ժողովրդի ոգին հատկանշող բնավորությունը, խառնվածքն ու գույները: Մ. Սարյանի արվեստը, սակայն, որքան ազգային, նույնքան էլ համամարդկային է: Նրա հիասքանչ կտավներում ազգայինը գեղարվեստորեն իմաստավորվել է համամիութենական տեսանկյունով, ներդաշնակորեն զուգակցվել են ազգայինը և սոցիալիստականը: Մեծ նկարիչը հասել է մասնավորի և ընդհանուրի, ազգային ձևի և համամարդկային բովանդակության օրգանական ներդաշնակության: Մ. Սարյանի արվեստն ինտերնացիոնալ է շնորհիվ այն բանի, որ նա աշխարհի մյուս ժողովուրդներին արվեստի միջոցով հաղորդակից է դարձնում իր ազգի սոցիալական ու մշակութային փորձին, վերելքին:

Այսպիսով, ազգայինը չի կարելի դիտել այլ կերպ, քան այն կապակցությամբ, որն այն տանում է դեպի ընդհանուրը, համամարդկայինը, որպես ընդհանուրի ձև, առանձինի դրսևորում: «Առանձինը գոյություն չունի այլ կերպ, — գրել է Վ. Ի. Լենինը, — քան այն կապակցությամբ, որը տանում է դեպի ընդհանուրը: Ընդհանուրը գոյություն ունի միայն առանձինի մեջ, առանձինի միջոցով: Ամեն մի առանձին, (այսպես թե այնպես) ընդհանուր է: Ամեն

մի ընդհանուր առանձինն (մասնիկը կամ կողմը, կամ էությունն) է»¹⁹, լենինյան այս դրույթը բանալի է ըմբռնելու ազգային և ինտերնացիոնալիստական չհարաբերակցության դիալեկտիկան:

ՄՍՀՄ ժողովուրդների հոգևոր միասնության գոյացման ու ամրապնդման ճանապարհին խթանիչ օրլեկտիվ գործոն է սոցիալիստական ազգերի ու ազդեցությունների ծաղկումն ու մերձեցումը: Կուսակցությունը մշտապես հաշվի է առել սոցիալիզմի արգասիք այդ օրինաչափ գործոնների գործողությունը: Սլենելով նրանից, որ ազգերի մերձեցման պրոցեսը թելադրվում է մեր սովետական կյանքի ողջ ընթացքով, «կուսակցությունը,— ասել է Լ. Ի. Բրեժնևը,— դեմ է դրա արհեստական արագացմանը, դրա կարիքը բնավ չկա...: Կուսակցությունը միևնույն ժամանակ անթույլատրելի է համարում ազգերի մերձեցման պրոցեսը կասեցնելու ամեն մի փորձ, այդ պրոցեսը այս կամ այն պատճառով խանգարելու, ազգային մեկուսացածությունը արհեստականորեն ամրապնդելու ամեն մի փորձ, որովհետև դա կհակասեր մեր հասարակության զարգացման գլխավոր ուղղությանը, կոմունիստների ինտերնացիոնալիստական իգեալներին ու գաղափարախոսությանը, կոմունիստական շինարարության իգեալներին»²⁰:

ՄՄԿԿ XXVI համագումարը կուսակցության սրբազան պարտքը համարեց բոլոր աշխատավորներին, հասկապես աճող սերնդին, դաստիարակել սոցիալիստական ինտերնացիոնալիզմի և սովետական հայրենասիրության, միասնական սովետական մեծ հայրենիքին պատկանելու հպարտ զգացմունքի ոգով: Համագումարը նշեց, որ կուսակցությունը պայքարել և այսուհետև էլ վճռականորեն կպայքարի սոցիալիզմի բնույթին խորթ այնպիսի երևույթների դեմ, ինչպիսիք են շոփինիզմը կամ նացիոնալիզմը, ամեն տեսակ նացիոնալիստական խեղաթյուրումների դեմ, լինի դա հակասեմիտիզմ, սիոնիզմ կամ որևէ մի ուրիշ բան²¹:

ՄՍՀՄ ժողովուրդների միասնական կուլտուրայի կազմավորման պրոցեսը, նրա հոգևոր կյանքի հարաճուն ինտերնացիոնալացումն ընթանում է հավասարության, եղբայրական համագործակցության ու կամավորության լենինյան սկզբունքների խստորոշ հաշվառման ու կիրառման հիման վրա: Պատմությունը չգիտե մի այլ պետություն, որը խիստ կարճ ժամկետում այնքան շատ բան արած լինի ազգերի և ազգությունների տնտեսական ու հոգևոր զարգացման համար, որպիսին է ՄՍՀՄ-ը՝ մեր բոլոր ժողովուրդների սոցիալիստական հայրենիքը: Հիրավի, դրանում է ՄՍՀՄ կազմավորման և բուռն զարգացման միջազգային նշանակությունը:

ДУХОВНОЕ ЕДИНСТВО НАРОДОВ СССР

ГУРГЕН ХАЧАТРЯН

Резюме

Становление и всестороннее развитие социалистической по содержанию и национальной по форме культуры — одно из величайших завоеваний социализма. Она базируется на общественной собственности

19 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 38, էջ 458:

20 Լ. Ի. Բրեժնև, Լենինյան կուրսով, հ. 4, Երևան, 1974, էջ 86:

21 ՄՄԿԿ XXVI համագումարի նյութերը, Երևան, 1981, էջ 92:

на средства производства, отсутствии антагонистических классов и социальных групп, на утверждении отношений равноправия, плодотворном сотрудничестве народов СССР, на социальном, морально-политическом и идеологическом единстве советского общества.

Огромны достижения советской системы народного образования, науки, литературы и искусства во всех национальных республиках. В Конституции СССР законодательно подтверждено полное равноправие всех языков, наций и народностей страны, право обучения на родном языке. Всей своей сущностью и содержанием советская культура нацелена на всемерное сближение, укрепление дружбы и сотрудничества, на единение и сплочение всех народов СССР.